

կը դառնային ըմբոստութիւնները: Քիւրտիստանի ներքին իշխանապետութիւնները թրքական վտանգը կը զգային, ու առիթը չէին փախցնէր հարուածելու թրքական զօրքերը, որոնց ներկայութիւնը միակ նշանն էր թրքական գերիշխանութեան մը գոյութեան: Այսպէս, Ձէյթունէն յետոյ, Քիւրտիստանի հեռուոր, բայց ամենէն զօրաւոր մէկ շրջանը, Սիւլէյմանիէի փաշայըղը, սպասամբութեան դրօշակը կը բարձրացնէր:

1806-ին Սիւլէյմանիէի Բարան աշիրէթապետ Արտիւրանման փաշան սպասամբեցաւ, եւ Սուլթանի զօրամասերը ոչնչացուց, հետըհետէ լայնցնելով իր ազգեցութեան շրջանակը: Բայց երկու տարուան անհաւասար կռուի մէջ սպանուեցաւ: 1812-ին իր տղան, Ահմէտ փաշա Բարան կռուի մէջ յաղթական դուրս եկաւ եւ իր ազգեցութեան տակ առաւ Պաղտատի քանի մը գաւառներն ալ: Յնցումները աւելի ու աւելի տարածուեցան: 1820-ին Չապաները, իսկ 1829էն մինչեւ 1839ը Ռէվանտիզի, Հէքեարիի, Թիւր-Արտիի, Ահնճարի եւ Տիարպէքիի շրջանները կռուի ձեռնարկեցին Թուրքիոյ դէմ, մարդկային եւ անտեսական ահուկի կորուստներ պատճառելով օսմանեան կայսրութեան:

Քրտութիւնը ազգային ամբողջութիւն մը ունէր Տիգրանակերտէն ու Պարզանէն մինչեւ Սիւլէյմանիէ: Ինչպէս տեսանք, քրտական շորս փաշայութիւնները կը գտնուէին Մուսուլի, Հէքեարիի եւ Սղերդի միացեալ կէտերու միջեւ.— Չուլամերկի, Ամատիայի, Չախոյի եւ Սիւլէյմանիէի փաշայութիւնները: Թրքական կառավարութիւնը իր գերագոյն ճիգերը լարեց հէնց կռուքէն հարուածելու քիւրտ ցեղը, բուն Քիւրտիստանի մէջ\*):

1830-ական թուականներուն տեղի ունե-

\*) ձօն Մաքթոնալը իր "Voyage dans l'Asie Mineure, L'Armenie et le Kurdistan" գրքին մէջ, այդ փաշայութիւններու մասին խօսելով կ'ըսէ. «Ամատիան եւ Չախօ անկախ իշխանութիւններ են եւ Պաղտատի Պալիֆի անկումէն յետոյ, իրենք են տէրը իրենց շրջանին. եւ իշխանները ժառանգականօրէն իրարու կը յաջորդեն»: (էջ 251):

ցած դէպքերն ալ կը ստիպէին Թուրքիան աւելի մեծ ուժեր կեդրոնացնելու Քիւրտիստանի սահմաններուն մէջ: Եզրիպտոսի Իբրահիմ փաշան գրաւած էր Սիւրիան եւ իրեն կեդրոնատեղի ընտրած էր Դամասկոսը, միւս թեւը, Միջերկրականի ճամբով մտած էր Կիլիկիա: Թըրքական պետութեան գոյութիւնը արդէն խնդրոյ առարկայ կը դառնար: Քիւրտերը, մէկ կողմէ թրքական տոնձգութիւններէն սրտնեղած, միւս կողմէ եզրիպտական բանակի ներխուժումէն քաջալերուած, աւելի անհանդուրժող կը դառնային: Թրքական կառավարութիւնը, մինչեւ այդ թուականները Քիւրտիստան զրկած իր պատժիչ զօրամասերը խոշոր զօրաբանակի մը կը վերածէ, մօտ 100,000-նոց բանակ մը, որ երկու խոշոր նպատակ ունէր իրականացնելու: Առաջին, շարունակել նախորդ տարիներու պատժական գործողութիւնները՝ քիւրտ անկախ շրջանները վերջնականապէս ընկճելու. երկրորդ՝ թրքական բանակը նոր զօրամասերով (տեղական ուժերէ) ուժեղացնել եւ պատերազմիլ Իբրահիմ փաշայի դէմ, որ օրէ օր սպառնական դիրք մը կ'առնէր:

1838-ին չարժման մէջ դրուած օսմանեան բանակի ընդհանուր հրամանատարն էր Հաֆիզ փաշան: Գերմանացի յայտնի զօրավար Մօլտկէն բանակի ընդհանուր հրամանատարական կազմի մէջն էր՝ որպէս կազմակերպիչ եւ ըստ պայակոչտի խորհրդական: Չօրավար Մօլտկէն այդ երկու երեք տարուան զինուորական գործողութիւններու, ինչպէս նաեւ գործողութեանց միջավայրի եւ բնակչութեան պատկերը տուած է իր նամակներուն մէջ, որոնք ուղղուած են իր մօրը եւ յետոյ հրատարակուած՝ հատորով մը: Մօլտկէն թրքական բանակի թիւը 80,000 կը հաշուէ: Մօլտկէնի գիրքը քանի մը անկիւններէ մեր ծանօթութիւնը կը հարըստացնէ եւ զիւրութիւններ կուտայ լուսաբանելու շարք մը երեւոյթներ, որոնք սերտօրէն աւերչութիւն ունին մեր ուսումնասիրած նիւթին հետ:

Ամենէն առաջ պարզ կ'երեւի այդ նամակներէն այն կորովի եւ անզիջող դիմադրութիւնը, որ ցոյց տուած են քիւրտերը թրքական զօրքին, տակաւին 1838-ի զօրաբանակի չարժումէն առաջ: Միեւնոյն ժամանակ, մենք կը